# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
# ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
# 2026թ.

*Ընտրե՛լ ճիշտ պատասխանը:*
*Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է 1 միավոր:*
*Սխալ պատասխանի, պատասխանի բացակայության, ինչպես նաև մեկից ավելի  պատասխանների դեպքում դեպքում գրանցվում է 0 միավոր:*

| | | |
|---|---|---|
| 1. | **Թվարկված հասկացություններից ո՞րն է ավելորդ:**<br>Կենդանիները լինում են.<br>1. գիշատիչ<br>2. բուսակեր<br>3. կաթնասուն<br>4. ամենակեր | 1.<br>2.<br>3.<br>4. |
| 2. | **Համարժեք (միաժամանակ ճշմարիտ կամ միաժամանակ սխալ) են արդյո՞ք հետևյալ զույգ դատողությունները:**<br><br>**ա)** *Ամեն փայլող բան ոսկի չէ:<br>*Որոշ փայլող բաներ ոսկի չեն:<br><br>**բ)** *Որոշ օձեր թունավոր չեն:<br>*Բոլոր օձերն ունեն թունավոր ատամներ: | 1. ա)այո;  բ)այո<br>2. ա)այո;  բ)ոչ<br>3. ա)ոչ;  բ)այո<br>4. ա)ոչ;  բ)ոչ |
| 3. | **Կռահելով պատկերների օրինաչափությունը՝ «?»-ի փոխարեն ընտրեք պակասող պատկերը:**<br> | 1. <br>2. <br>3. <br>4.  |
| 4. | **Ո՞ր պատկերը պետք է լինի հաջորդը:**<br> | 1. <br>2. <br>3. <br>4.  |

| | | |
|---|---|---|
| 5. | **Քանի՞ եռանկյուն կա պատկերված նկարում.**<br> | ☐ 16<br>☐ 22<br>☐ 24<br>☐ 28 |
| 6. | **Կանոնավո՞ր (ճիշտ) են արդյոք հետեւյալ մտահանգումները.**<br><br>ա) Պիեռ Ռիշարը ուրախ ու սրամիտ մարդ է, քանի, որ ֆրանսիացի է: Իսկ ֆրանսիացիներն հիմնականում ուրախ ու սրամիտ մարդիկ են:<br><br>բ) Եթե աշակետը կատարել է դասագրքի վրա աշխատելու հանձնարարությունը, ապա այդ մասին կիմանա դասագրքից: Իսկ եթե նա մասնակցել է դասին, ապա այդ մասին կիմանա ուսուցչից: Բայց աշակետը չի կատարել դասագրքի վրա աշխատելու առաջադրանքը և դասախոսությանն էլ չի մասնակցել: Հետևաբար՝ նա չի կարող իմանալ այդ մասին: | 1. ա)այո; բ)այո<br>2. ա)այո; բ)ոչ<br>3. ա)ոչ; բ)այո<br>4. ա)ոչ; բ)ոչ |
| 7. | **Կանոնավո՞ր (ճիշտ) են արդյոք հետեւյալ մտահանգումները.**<br><br>ա) Բոլոր հանրապետություններն ունեն ժողովրդավարական կառավարում: Մեծ Բրիտանիայի Թագավորությունը հանրապետություն չէ: Հետևաբար՝ ՄԲ Թագավորությունը ժողովրդավարական չէ:<br><br>բ) Եթե միջավայրը թթվային է, ապա լակմուսը ներկվում է կարմիր, իսկ հիմնային միջավայրում այն ընդունում է կապույտ գույն: Տվյալ դեպքում լակմուսը ոչ կարմրել է, ոչ էլ կապտել: Ուրեմն, միջավայրը ո՛չ թթվային է, ո՛չ էլ հիմնային: | 1. ա)այո; բ)այո<br>2. ա)այո; բ)ոչ<br>3. ա)ոչ; բ)այո<br>4. ա)ոչ; բ)ոչ |
| **8.** | **Քանի՞ թերություն կա հետևյալ կշռադատության մեջ:**<br><br>Հետազոտությունները վկայում են, որ անչափահաս հանցագործների 96%-ը սերում է այն ընտանիքներից, որտեղ վարունգը մշտապես գործածվում է որպես սնունդ: Վաղաժամ մահացածների 90%-ը մահվանը նախորդած 5 օրերի ընթացքում կերել է թարմ կամ թթու վա- | 1. չորս թերություն<br>2. երեք թերություն<br>3. երկու թերություն<br>4. մեկ թերություն<br>5. թերություն չկա |

| | | |
|---|---|---|
| | րունգ: Ամուսնալուծությունների վիճակագրությունը վկայում է, որ ամուսնալուծությանը նախորդած օրերի ընթացքում կողմերը օգտագործել են վարունգ: Ավիա- և ավտոաղետների ենթարկվածների 98,6%-ը առիթը բաց չի թողել վարունգ ուտելու համար: Հետևաբար՝ վարունգը վտանգավոր է կյանքի ու առողջության համար: | |
| 9. | Վարպետը կուժեր պատրաստելու պատվեր ստացավ: «Եթե այսօրվանից սկսած օրական պատրաստեմ 4 կուժ, ապա կավարտեմ կիրակի օրը: Իսկ եթե պատրաստեմ օրական 6 կուժ, ապա աշխատանքը կավարտեմ ուրբաթ»: Շաբաթվա ո՞ր օրը բրուտը ստացավ պատվերը: | □ երկուշաբթի<br>□ երեքշաբթի<br>□ չորեքշաբթի<br>□ հինգշաբթի |
| 10. | Վաճառականն ապրանքը գնեց 6 դրամով և վաճառեց 7 դրամով: Այնուհետև զղջաց ու հետ գնեց այն 8 դրամով և այս անգամ վաճառեց 9 դրամով: Որքա՞ն կազմեց վաճառականի շահույթը: | □ 1 դրամ<br>□ 2 դրամ<br>□ 3 դրամ<br>□ 4 դրամ |

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

| *Հարցի համարը* | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***Ճիշտ պատասխանի համարը*** | **3** | **2** | **4** | **1** | **3** | **4** | **3** | **3** | **2** | **2** |